



2. ՕՒՆԵՇ

Մարդու մի մեկ կելլի, կերթա ցախ ժողվելու, կը բերա ցախ մեկ աղբրի վերեն, հոն կը նեղենա, կը նստի, կասա. - Օխ՛եշ:

Նակաստան աղբրի ակնեն մեկ կելլի, կասա. - Խա՛յ, ի՞նչ ա:

Կասի. - Աղբեր, ես նեղացա, «օխեշ» էրի:

- Որ էդմալ ա, - կասի, - կայնիր դատ, չուր ես գամ:

Մարդ մտավ, սուֆրեմ էբեր, ասաց. - Խա՛յ, չասես՝ «սուֆրա, սուֆրա»:

Խայն առավ սուֆրեն, էկավ ճամբխու խետ, ասաց. - Սուֆրա, սուֆրա:

Աստղծու խրամանքով ի՞նչ որ ասես, սուֆրի մեջ լցվավ:

- Փառք Աստղծու, - ասաց, - ձի լավ էղավ, ես մեռա ցամաք խաց ուտելով:

Առավ սուֆրեն, էբեր տուն, ասաց. - Կնիկ, չասես՝ «սուֆրա, սուֆրա»:

Մարդն էլավ, լուսուն գնաց ի պրակ. կնիկ սուֆրեն էբեր, ասաց. - Սուֆրա, սուֆրա:

Աստվածութեն ինչ որ ստեղծեր էր, սուֆրի մեջ լցվավ. նստավ կուշտ կերավ, չուրի էն օր կուշտ չէր կերեր: Վերուց սուֆրեն, դրեց դեն: Իրեք ամիս մնաց, մարդ գնաց ինչ կանդար գեղական կեր, տուն գլուխ երկու մարդ էբեր զիաֆաթ:

Գեղական լցվան ի տուն, իշկեցին թունիր, պուտուկ չկա, տաշտ խաց չկա:

- Էսա մեզի հորի՞ն էրեր, - ասեցին:

Մարդ սուֆրեն էրեր, փռեց, ասաց. - Սուֆրա, սուֆրա:

Խըտ ասելուն խազար թուռլու եմակ լցվավ ի մեջ սուֆրին:
Աջբըցան՝ թե Էսա ինչ բան ա. իմ աղբորն ասեմ՝ կերան, կշտացան, էլան
զյանցին:

Մնաց չուրմ տաս տարի: Ըռեսի տղեն խաբեց կնկյան, չորս խարիի
քիլա ցորեն էտուր, առավ զսուֆրեն, գնաց:

Իրիկ էկավ, ասաց. - Ու՞ր ա սուֆրեն:

Ասաց. - Չորս խարիի քիլա ցորեն առա ըռեսի տղից, տվի:

- Աստված քո տուն ավիրա, էդ ի՞նչ էրիր, - ասաց մարդ:

Մնաց իրեք տարի, խաց խըլըսավ. էլման էն առջի ֆուղարեն. իմ
աղբորն ասեմ՝ էլավ էլման գնաց ի պրակ, փետ շալկեց, էկավ, նստավ
վեր աղբրին, ասաց. - Օխ՛եշ:

Օխեշ էկավ դուս, ասաց. - Ի՞նչ ա:

- Աղբեր, - ասաց, - ես նեղեցա, «օխեշ» էրի:

Ասաց. - Կայնիր դատ, չուր ես գամ:

Գնաց առավ էշ մի, էրեր, ասաց. - Ա՛ռ քեզի, հըմա չասես՝ «է՛շ ա, է՛շ»:

Մարդն ասաց. - Ինչ պտի ասեմ «էշ ա, էշ», ծի ցախ կը բերեմ ի
պրակեն:

Էրեր, ճամբախ, ասաց. - էշ ա, էշ:

էշ կայնավ, կոտ մի օսկի ցըռեց:

Առավ էշ, էրեր տուն. կնկյան ասաց. - Չասես՝ «է՛շ ա, է՛շ»:

Խըտ ասելուն կոտ մի օսկի էլ էնտեղ էտուր:

- Կնիկ, - ասաց, - Քու Ասու սիրուն էղնի, չէղի մարդու ասես:

Տաս տարի մնաց, մարդն էղավ աղա. կնիկ էղավ խանըմ:

Ավուր մեկ կնիկն ասաց. - Օ՛, էշ պտի խեծիմ, էրթամ համամ:

Էրիկ ինչ էրեց, չարա չեղավ: Կնիկ խեծավ էշ, գնաց համամ. մտավ ի
նեռս, համամճուն էլ ասաց, օ իշուն մուղյաթ կենա, հըմու չասի՝ «էշ ա,
էշ»:

Համամճին տարավ, զէշ կապեց, բերեց խոռոմ մի խոտ դրեց իշու
առեջ, իշկեց կուշտ ու բոլոր, ասաց՝ «էշ ա, էշ»:

էշ կոտ մի օսկի էլ էնտեղ ցըռեց:

Համամճու խելք թռավ ուրախութենից. վազավ, գնաց, էշ մի գնեց,
բերեց էդ իշու տեղ կապեց, զէդ էշ տարավ ուր տուն: Կնիկ համամեն էլավ,
էրկու խարիի օսկի էտուր համամճուն բաղընսի փարա, խեծավ էշ, գնաց
ուր տուն. էշ բերեց, կապեց թավլեն, ասաց՝ «էշ ա, էշ»:

Տեսավ օ, հարամ ու ռաշ եղի, ըսկի օսկի չկա:

Մնաց վեց տարի, մարդն էլման էն անոթի, տկլոգ. էլման չվան թալեց
ի թև, գնաց պրակ: Շալկեց շալաք մի փետ, էկավ, նստավ վըր աղբըրին,
ասաց. - Օխե՛շ:

Օխեշ էլավ դուս, ասաց. - Նստի, չուրի ես գամ:

Գնաց էբեր բիր մի, ասաց. - Առ քե, բիր մի, հըմա չասես՝ «բի՛ր, հա՛
բի՛ր»:

Առավ գբիրն, էկավ, ճամբխուն ասաց. - Բի՛ր, հա՛ բի՛ր:

Բիրն առավ էդոր, դե՛, տո՛ւր որ կուտաս. էնքան էտուր, որ մարդն
եղավ մեռել, ընկյավ ի գետին, բիրն էլ դադրավ, ընկյավ խըտ կշտին:

Կեճտան կեճ մարդ կոտորովելով, ջարդորտովելով էլավ, առավ գբիր,
էկավ տուն, կնկյան ասաց. - Չասես՝ «բի՛ր, հա՛ բի՛ր»:

Լուսուն շուտ մարդ չվան թալեց ի թև, գնաց պրակ:

Կնիկ բիր կախեր էր պատից, էբեր, ասաց. - Բի՛ր, հա՛ բի՛ր:

Բիր պրծավ, ընկավ վըր կնկյան, տուր օ կուտաս, էմալ մի գարկեց,
գկնիկ արնվա էրաց: Կնիկ կիսամեռ ընկյավ, բիրն էլ խետ կշտին:

Մարդ էկավ, իշկեց, դուռ փակուկ: Դես ու դեն դըրկեցներուն
խարցուց, կնիկ չկա. - Ջանըմ, - ասաց, - իմ կնկյան ինչ էղավ:

Էկան տողըկի ծակեն իշեցին, օ կնիկ մեռուկ, ընկեր ա դատի:

Նոր դուռ կոտրեցին, մտան ի ներս. բերին ջուր, լցին վըր կնկյան,
պորտ օլըրեցին. կնիկ սաղցավ, էլավ նստավ:

Մարդ խարցուց. - Կնիկ, էդ ի՞նչ էղավ քե:

- Այ Աստված, ավիրա քո տուն ու քո բերած բրին, ծի վրա խալ
չթողեց:

Նոր մարդն իմցավ զուր բրի խունար. առավ գբիր, գնաց ըռեսի
տուն, ասաց՝ «բիր, հա բիր»: Բիր ընկյավ ըռեսի տան մեջ, զըմեն էրաց
մեռել:

- Դո՛ւ էղիս քո Աստված. - ասաց ըռես, - քո բիր բռնա, քո սուֆրեն
տամ:

Մարդն առավ զսուֆրեն, էկավ տուն: Էլման առավ գբիր, գնաց
համամ: Համամճուն էլ էն քյաղարլըկին ջարդել տվեց, առավ զուր էշ,
էկավ տուն:

- Դե, - ասաց, - կնիկ, չեղի էլման ասես՝ «բի՛ր, հա՛ բի՛ր»: